ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ПРАВЛЕНИЕ СОЮЗА ПИСАТЕЛЕЙ АРМЕНИИ
BOARD OF THE WRITERS' UNION OF ARMENIA

№.....Գ-Մ-65 «23» 09 2019թ.

*Միության նախագահ*
*Председатель Правления*
*Chairman of the Board*

Գյումրու համայնքապետարան

Քաղաքապետ պրն. Սամվել Բալասանյանին

Հարգելի պարոն Բալասանյան,

2020թ. լրանում է բանաստեղծ, հրապարակախոս, թարգմանիչ Հովհաննես Գրիգորյանի 75-ամյակը:Սույն նամակով դիմում ենք Ձեզ՝ որպես հոբելյանական տարվա նախապատրաստություն և մեկնարկբանաստեղծի անունով նրա ծննդավայր Գյումրիում հուշատախտակ տեղադրելուխնդրանքով:

Հովհաննես Գրիգորյանը հայ ժամանակակից բանաստեղծներից է, որն ունի ընթերցողների մեծ բանակ և որի գրքերն այսօր պահանջված են: Նրա բանաստեղծությունները թարգմանվել են աշխարհի բազմաթիվ լեզուներով: Առանձին գրքերով թարգմանաբար լույս են տեսել Ռուսաստանում («Չուղարկված նամակներ», 1985թ.), Ֆրանսիայում («Constitution», 2007թ.), Իրանում(«Բոլորովին ուրիշ աշուն», 2009 թ., «Երազներ, որի համար արժե քնել եւ չարթնանալ», 2014 թ.):

Հովհաննես Գրիգորյանը մի շարք գրական մրցանակների դափնեկիր է: 1998 թ. պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով: 2011թ. Հովհաննես Գրիգորյանն արժանացել էՀՀ պետական մրցանակի գրականության և հրապարակախոսության ոլորտում իր «Երբեք չմեռնես, ահա թե ինչ կասեմ քեզ» գրքի համար:

375019, Երևան, Մարշալ Բաղրամյան 3 Ереван, Маршала Баграмяна 3 Yerevan, Marshal Baghramian 3
☎ 56. 38. 11 E-mail: wua.freenet.am

Բանաստեղծի գրական ժառանգությանը կարող եք նաև ծանոթանալ օնլայնհարթակում(տե՛սպաշտոնական կայքը - www.hovhannesgrigoryan.com):

Բանաստեղծը ծնվել է 1945թ. Գյումրիում՝ Ֆուրմանովի փողոց, 4-րդ նրբանցք, 23 տուն հասցեում: Հենց այս հասցեում գտնվող նրա հայրական տան պատինկցանկանայինք տեղադրել բանաստեղծի հուշատախտակը, որտեղ կնշվի որ այդ տանը ծնվել և իր մանկության տարիներն է անցկացրել բանաստեղծը:

2019թ. լրանում է բանաստեղծի մահվան 6 տարին: Իր բանաստեղծական ժառանգության շատ արժեքավոր մաս նվիրված է իր սիրելի ծննդավայրին: Ինչի կապակցությամբ լիահույս ենք, որ Գյումրիում նրա հուշատախտակըկդառնա կարևոր հուշ Գյումրեցիների համար ևս:

Հարգանքներով,

Հայաստանի գրողների միության նախագահ

Էդվարդ Միլիտոնյան

20սեպտեմբեր , 2019թ.